ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N 26/02/3356-23 «4» հոկտեմբեր 2023թ.

«Զաքունց» ՍՊԸ-ի տնօրեն՝
պարոն Ա. Զաքարյանին

Հարգելի պարոն Զաքարյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը «Զաքունց» ՍՊԸ-ի հետ 2023 թվականի մարտի 22-ին կնքել է **«Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման»** ծառայությունների մատուցման պետական գնման թիվ **ՈՀՏԶՀ-ՄԳ-ՀԲՄԱՊՁԲ- 2023/1/1/2** պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է նախատեսվել 80 օրացուցային օր, հետագայում՝ 2023 թվականի հունիսի 5-ին կողմերի միջև կնքված Համաձայնագիր 1-ով մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 95 օրացուցային օր և նոր ժամկետ է սահմանվել 2023 թվականի հունիսի 26-ը: Սակայն, 2023 թվականի հունիսի 16-ի թիվ 1606 գրությամբ Մատակարարը տեղեկացրել է իր կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման անհնարինության մասին՝ պատրաստման համար անհրաժեշտ նյութերի շուկայում առկա գների թանկացմամբ պայմանավորված:

Հաշվի առնելով վերը նկարագրվածը և հիմք ընդունելով թիվ **ՈՀՏԶՀ-ՄԳ-ՀԲՄԱՊՁԲ-2023/1/1/2** պայմանագրի **2.1.7 (բ)** ենթակետի, **6.2, 6.3 և 8.10** կետերի դրույթները կայացվել է որոշում.

1. Համարել ծառայությունների մատուցման պետական գնման թիվ **ՈՀՏԶՀ-ՄԳ-ՀԲՄԱՊՁԲ- 2023/1/1/2** պայմանագիրը **2023 թվականի հուլիսի 7-ից** լուծված.

2. Պայմանագրով նախատեսված կատարման ժամկետը խախտելու համար սահմանել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0, 05% չափով, որը կազմում է **12,679** դրամ (**3,622,500**x7x0,0005).

3. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար սահմանել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գումարի, այն է՝ **3,622,500** դրամի 0,5% չափով, որը կազմում է **18,113** ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
Հեռ. (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
Tel. (37410) 247 123

Նշված գումարները խնդրում ենք սույն փաստաթուղթը հրապարակելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՏՋՀ-ի բանկային հաշվին՝ Արարատբանկ ԲԲԸ 1510032335590400:

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Պայմանագրի կատարման տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով և Որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով թիվ **ՈՀՏՋՀ-ՄԳ-ՀԲՄԱՊՁԲ- 2023/1/1/2** Պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար ՀՏՋՀ-ն մտադիր է դիմել «Ամերիաբանկ» ԲԲԸ՝ **517,520 դրամ և 892,718 դրամ** գումար ստանալու պահանջով: Տուժանքի համաձայնագրերով նախատեսված ընդամենը **1,410,238** դրամ գումարի պահանջը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գումարը չստանալու դեպքում, «**Զաքունց**» ՍՊԸ-ի տվյալները փոխանցվելու են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ համապատասխան ցուցակում ընդգրկվելու համար:

Հարգանքով՝ 7/4/2023

Գործադիր տնօրեն Ս. Բաղինյան

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կատարող՝ Ա.Իսախանյան 094 359 000